Ժառանգական նախագահի եւ նրա ընտանիքի տնտեսական վիճակով էլ մտահոգուած է հեղինակը։ Նախագահն ստանում է սովորական նախագահական ռոճիկը, ամսական 6000 դահեկան արծաթ, իսկ ընտանիքի բոլոր անդամներն էլ ստանում են թոշակ կամ օժանդակութիւն, ամսէ ամիս, հետեւեալ կարգով (ծէ, միը).—

1. Տեղական որդին	2,000 Դահեկան
2. Միւս որդիները, իւրաքանչիւրը	1,000
3. Նախագահի տիրուհին	1,000
4. Աղջիկներից իւրաքանչիւրը, մինչեւ ամուսնանալը	500

Այս բոլորից դուք պարզ տեսնում էք, որ Շահամիրեանը մէկ թռիչքով ռամկավար Հանրապետութիւնից անցնում է դէպի սահմանադրական միապետութիւն, որովհետեւ ժառանգական նախագահութիւնը, այն էլ այդպիսի բացառիկ արտօնութիւններով ու առանձնաշնորհումներով, իրապէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ սահմանադրական միապետութիւն։

Եւ իր այդ անհեթեթ թռիչքը նա անում է — ինչպէս արդէն ասել ենք — միմիայն իր բարեկամ Հերակլ Բ. վրաց թագաւորի սիրոյն, որին նա համարում էր Բագրատունեանց շառաւիղը, Հայաստանի գահի օրինական թեկնածուն եւ որի վրայ այնքան գեղեցիկ յոյսեր էր դրել նա։

Որպէս վերջաբան այս գլխի՝ աւելացնենք, որ Շահամիրեանն աշխատել է նախատեսել կեանքի բոլոր բաղմաղան երեւոյթներն ու դէպքերը եւ ըստ այնմ համապատասխան օրինագծեր է ներկայացրել։ Նա չի մոռացել հանր. նախագահի եւ զօրքի ու պաշտօնէութեան տարազն ու չքանչաններն անգամ։ Հանրապ. նախագահին վերաբերող օրէնքն այդ մասին ասում է.—

«Նախարարն զարդարի փառօք եւ արժան կարգի պաշտօնի իւրոյ այսպիսեօք.

Ուրար սեաւ ի պարանոց, ի թիկնամէջ։

Ի վերայ ուրարոյն ոսկատիպ առիւծ մի։

Ճառագայթ մի ակամբ փայլածու ի վերայ ձախու կրծոց։

Եւ ի միջի ճառագայթի գառն Աստուծոյ դրօշակ խաչին։

Եւ գնջիլն մի ոսկէ ի պարանոց եւ ի ծայր գնջլին ձիաւոր մի ոսկէ։

Եւ վերարկուն՝ փիլոն մի սեաւ երկայն եւ եւ ի ներս փիլոնի մորթ մկան, զաղոմէ1) սուր ընդմէջ ածեալ, ցուպ իշխանական ի ձեռին եւ թագ-պսակ ի գլուխն, ի վերայ գագաթին խաչ» (մԱդ)։

ՄԻԻՍ ԲԱՐՁՐ ՊԱՇՏՕՆՆԵՐԸ

Ասացինք, որ բոլոր բարձր պետական պաշտօնները Շահամիրեանի Հայաստանում ընտրւում են անմիջականօրէն ազգ. ժողովից եւ նրա անդամների միջից։ Այդ պաշտօններից մի քանիսն արդէն տեսանք — տանուտէրեր, հանր. նախագահ, 12-ի խորհուրդ եւն.։

Այժմ տեսնենք միւս բարձր պաշտօնները եւ նրանց գործառնութիւնները, երկու խօսքով, որով բաւական պարզուած կը լինի Հայաստանի պետական կազմակերպութեան պատկերը։

1. Ազգ. ժողովը իր միջից ընտրում է 25 հոգի «վասն ծայրագոյն դատաւորութեան», որոնցից մէկը նախագահն է այդ մարմնի եւ կոչւում է «մայր» դատաւոր, իսկ միւսները՝ անդամները։ Սա երկրի բարձրագոյն դատական ատեանն է, կենտրոնն է Հայաստանի մայրաքաղաքը եւ մօտաւորապէս համապատասխանում է ռուսական դատաստանական պալատին (իբ, ծթ)։

2. Ընտրւում են եւս 18 հոգի «ի պաշտօն տանն հայոց»։ Ի՞նչ է նրանց պաշտօնը եւ ի՞նչ պիտի անեն — հեղինակը ոչինչ չի ասում։ Հաւանօրէն ազգ. ժողովի քարտուղարութեան, գործավարութեան եւ նման աշխատանքների համար են, մանաւանդ որ նրանցից պահանջւում է լինել «կրթեալ դպրութեան եւ ատենաբանութեան եւ հմուտ օրինաց» (իգ)։ Սրանք — ինչպէս երեւում է — նաեւ պաշտօն ունին ժողովրդի շահերը պաշտպանելու պետական բարձր հիմնարկութիւններում — ազգ. ժողովում, 12-ի խորհրդում եւ դատական բարձրագոյն ատեաններում (կ)։

3. Ընտրւում են 6 հոգի «ի ծածուկ խոր-

1) Ղաղոմը պատուական քար է, լալ. ղաղոմէ նշանակում է լալից։